

Իսանյան Ս.Ա.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՊՈԼՍԱՀԱՅ ԱՐԴԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

«Ինչպիսի» ընթացքի մեջ է պոլսահայ պոեզիան և ի՞նչ տեղ է գրավում հայրենապատումը նրանում» հարցի պատասխանը ստանալու համար բավական է դիմել «Սփյուռքահայ արդի գրականություն» երկհատորյակին, որի Ա հատորը բաղկացած է 500, իսկ Բ հատորը՝ 800 էջից: Հատորները խմբագրել և համադրել է բանաստեղծուհի, գրականագետ-մանկավարժ Սեդա Ծաղիկյան-Տեմիրճյանը: Ժողովածուները հրատարակվել են Սփյուռքի 55 գրասեր ազգակիցների նվիրատվությունների շնորհիվ, որոնց անվանացանկը երախտիքի զգացումով բերված է նրանցում: Ա հատորը ամբողջությամբ ընդգրկում է պոլսահայ գրականությունը, Բ հատորը՝ աշխարհի տարբեր զաղթօջախներում ապրող գրողների ստեղծագործությունները:

Որպես մուտք, Ա.Տեմիրճյանը բերել է անմահ Դ.Վարուժանի մարգարեական խորհուրդը. «Ո՛վ պիտի կրնայ գրել այդ տառերում պատմությունը, որոնք հրաշեկ զամերու պես ցեղին գոյությունը հաստատեցին մեր մագաղաթներում հավերժական հաստատութեանց վրայ: Աստուածային Ա-ն սկսեալ, որ աղօթքը մը նման բազուկները վեր կարկառած, դարերու ընթացքին երկինքն հաստատ բռնեց հայութեան գլխուն վրայ, մինչև ինքնամփոփ Ֆ-ն, որ յոյսի քղամոլին փափաթուած սիրտը միայն բաց, քալեց, քալեց դեպի արշալույսերը գալիք օրերուն. այդ բոլոր տառերը կարաւան առ կարաւան առաջնորդեցին մեր գոյութիւնը, մեր հայկականութիւնը մինչև ներկա դարերերուն սեմին վրայ»:¹

Ինչպես տեսնում ենք, Մեծն Վարուժանը մայրենի մաշտոցագիր լեզվի հետ է կապել մեր ժողովրդի գոյությունն ու հայկականությունը: Դրանով էլ պետք է բացատրել Ա.Տեմիրճյանի բանաստեղծությունը՝ նվիրված հայ գրչի մշակներին, գետնդված Ա հատորում, և այդ հատորներում հայրենասիրական երգերին մեծ տեղ հատկացնելը:

Պոլսահայ գրականությունը սկսեց աշխուժություն ապրել երկրորդ աշխարհամարտի տարիներին և նրանից հետո: Այն կապվում է Կարպիս ճանճիկյանի /1920-1946/, Հայկազուն Գալստյանի /1920-1985/ և Արամ Շավարշի /1917-1979/ մուտքի հետ: Այդ առթիվ Բագրատ Թեվլյանը գրել է. «Արդեն իսկ այդ տղաքը մեր ցեղին յատուկ ստեղծագործ ընդունակությամբ կրցած են ինքնատիպ արուեստի նոր ուղի մը բանալ հայ գրականության մեջ»:² Իսկ Ջառեհ Խրախունին 1991-ին ընդգծել է. «Որքան ուրախ, որքան հպարտ պետք է ըլլանք մենք ամենքս ալ, որ այսօր հօգ չէ թէ փոքր չափի վրայ, բանակը կարելուր չէ այնքան – մենք ալ ունինք ինքնուրույն քերթողութիւն մը, որ թերեւս վերջին շրջաններու պատմութեան մեջ առաջին անգամ ըլլալով՝ կէս դար հեռուն չի հետեւիր եվրոպական գրական դպրոցներու, այլ անոնց հասասար մակարդակի վրայ, ինքն ալ փոքր առ փոքր կը խմորէ հատ մը՝ նոյնքան բարձրորակ, խոստմնալից, կենսունակ»:³ Իսկ Հակոբ Կարպենցը պիտի հաստատի, «Կարպիս ճանճիկեանը մահացաւ 26 տարեկան հասակում: Այդուհանդերձ իր երևումը հայ գրականութեան երկնակամարում ասուպային ցուլից առաւել եղավ շրջադարձային, յատկապես խոսամպուլահայ բանաստեղծութեան բնագավառում»:⁴

Հակոբ Կարպենցին գրավեց ճանճիկյանի պարզ, անմիջական, անպաճույճ ոճը: Նա գրական հրաշքի համագոր երևութ է համարում համաշխարհային առաջին պատերազմի ու Մեծ եղեռնի պատճառած արհալիրքներից հետո Պոլիսը գրական նոր փնտրտուքների կենտրոն դառնալը: Հիրավի, Կ.ճանճիկյանը, Հ.Գալստյանը և Ա.Շավարշը պոլսահայ գրական նոր շարժման նախակարապետները եղան, որոնցից հետո 50-ական թ սկսած հանդես եկան Արմենուհի Թեղոյանը, Ատրիսե Տատրյանը, Վարուժան Աճեմյանը, Ջալեն Պիպեոյանը, Երվանդ Կոպեյանը, Ջահրատը, Ռոպեր Հատտեճյանը, Ջառեհ Խրախունին և ուրիշներ:

Ի՞նչ տեղ է գրավում հայրենապատումը պոլսահայ բանաստեղծների ստեղծագործություններում և ի՞նչ երանգներով են նրանք արտահայտում իրենց անմարում

կարոտն ու զգացումները մի այնպիսի քաղաքում և երկրում, որտեղ յաթաղանի զոհերը դարձան մեկուկես միլիոն հայեր, և այսօր էլ Պոլսում ապրող նրանց ժառանգները գտնվում են թալեաթածին հայացքների տակ:

Ծանոթանալով պոլսահայ բանաստեղծների ստեղծագործություններին, նկատում ես, որ նրանք երբեք իրենց մտքից ու խոհերից չեն հանում մեր պատմական հայրենիքի պատկերը, չեն դադարում ազատության սրբազան գաղափարից: Նկատելի է, որ նրանց հայրենապատումը ճակատային չէ, ավելի շատ իրենց զգացումներն արտահայտում են ենթաբնագրային արծարծումներով: Մի այնպիսի նուրբ բանաստեղծ, ինչպիսին Կարպիս ճանճիկյանն է, տարագրությունն իր իսկ տան մեջ արտահայտում է այսպես.

Փողոցը նոյն տեղը կը մնայ
պանդոկին դուռը նոյն
մեր բզկտած հացին փշրանքները
կը մնան դեռ սեղանին վրայ
եւ փողոցի նայող
պատուհաններուն վարագոյրները
մեր վար քաշած վիճակին մեջ նոյն
մենք ինչո՞ւ
նոյնը չմնացինք սիրելիս
դարձանք իրարու անճանաչելի:⁵
/«Տարագիր»/

Կ.ճանճիկյանի հայրենասիրությունը իր նրբերանգներով երևան է գալիս հողասիրության մեջ: Դիմելով հողին, նա հարցնում է. «Ինչպես կապրին մարդիկ երբ դուռն չըլլաս»: Բանաստեղծը մեկ առ մեկ թվարկում է հողի բարեմասնությունները և ապա հայկական անանցանելի կարոտով և վերադարձի հույսով ընդհանրացնում. «հաւատա հող քեզի համար տրուած իւրաքանչիւր նահատակ» ապացույցն ես մեր սիրո.

Թռչունները որ քեզմէ
իրենց ոտքերը կտրեցին
... Օր մը վերջապես
դարձեալ քեզի պիտի դառնան
ու օր մըն ալ
երբ դուռն օթեան պիտի ըլլաս
մեր մարմինին,
մեծ բանաստեղծներ
քեզի համար
քերթուածներ պիտի գրեն
էրնէկ մեզի
քու ծոցիդ մեջ պիտի ըլլանք:⁶

Մինա Թեօլեօյանը /1913/ հայրենիքի ազատությունը համարում է անմնացորդ: Բանաստեղծը նրա ծայրը լսում է Մասիսի ծերպերի մեջ, ուր Արտավազդը սերմեր է ցանել, Նոյան Տապանի հաղթերգի ղողանջներում, Ավարայրի խռովքում.

Անունդ ինչ փոթ, - երբ ոտնաձայնդ՝ հիմա,
Հոգիին մէջ մեր տխուր, աղօթական երգի պես,
Վաղուան այցը կ'ավետէ...
Տնորք մը չէս դուռն, այս փաստն է լուկ
Որ կընէ մեզ երջանիկ,
եվ տրոփին՝ որով կապրի մեր սիրտը դեռ

Անբաւ բերկրանք կը բերե...
Ե՞րբ պիտի գաս...

/«Ե՞րբ պիտի գաս»/

Հայրենասիրական իր երգերուն Ա.Զ.Ձանգուն (1917) կոչ է անուն չմոռանալ մեր երգերը, չվախենալ չարից, թշնամու ահից, միշտ հնչեցնել մեր լեզուն, չկորցնել օտարության մեջ («հնչու»)։ Հայրենասիրական նույն զգացմունքներն են արտահայտված նրա «Դարերն ի վեր», «Ափյուռքյան տվայտանք», «Եթե վիրավոր» բանաստեղծություններուն։ Իսկ Ձահրատին /1924/ հուզողը մեսրոպաբույր հայոց լեզվի հավերժացումն է։ Այն և խունկ է, և վանք, և ավետարան։ Ըստ Ձահրատի, Մեր հոգու հետ խոսում են Մեսրոպյան գրերը։ Նրանք.

Արեւ ու արտ կը բուրեն

Վարդ ու տխակ – Սայաթ – Նովա ու Կոսիտաս կը բուրեն
կեանք կը բուրեն

Վերագարթնում ու յաղթանակ կը բուրեն

Ուր որ ըլլան հողմացրին ուր որ գաղթեն-վարդապետ
Քու տառերդ ազատութիւն կը բուրեն։⁸

/«Մեսրոպաբույր»/

Իզնա Սարըասլանի /1945/ բանաստեղծական աշխարհում կորուսյալ հայրենիքը վերածվել է հոգևոր մի այնպիսի պատկերի, առանց որի չի պատկերացնում ոչ իր տենչը, ոչ էլ երգը։ *Պատմություն, չարչարանք, տառապանք, լույս* մետաֆորները նրա հայրենապատումի առեղներն են, իսկ *ազգ-ցեղ* հավաքական ուժերը ամենամվիրական երանգները, որոնք ընդհանրության մեջ հայի երազն են՝ նրա դարավոր հեքիաթի գորգը։ Հայրենիք-ազգ հասկացությունը Իզնայի մոտ հավասարվում են, պայմանավորվում մեկը մյուսով։ Աշխարհասփյուռ հայ ժողովրդի երազի իրականացումը բանաստեղծուհին կապում է նրա անբակտելի միության հետ։ Հոգ չէ թե ազգի մատներին «Կոչում են կապեն... Հերձոտներ փները», հոգ չէ թե «Ճաթեր են» շրթները... և երգերից «թախծ կը բուրեն», նրա քնարական հերոսը հավատում է ապագային.

Մինչ արիւն-քրտինքդ պիտի գծե

Կրանիթեայ կորովդ ազատութիւնդ պիտի հիւսե

Անցակտելի միութիւնդ անմահութիւնդ պիտի կերտե

Օ դուն իմ ազգս տառապած-դուն իմ ցեղս ցիրուցան։⁹

/«Գեղուն»/

Իզնայի «Կապույտի ծարաւ» բանաստեղծությունը հոգու բազմաշերտ ծալքեր ունի։ Նման երգ կարող է հյուսել միայն հայ բանաստեղծը։ Կապույտ երկինքների, կապույտ ծովերի, կապույտ երազների, կապույտ ծաղիկների ընդհանուր ծփանքն ու բույրը Իզնայի քնարական հերոսին հասցնում են «Կապույտ անցեալներ»-ին, որտեղ նա կարող է «Տրցակ տրցակ հուշեր» մտաբերել, սակայն միշտ «տառապող սրտի մեջ» զգալ անհազ մի ծարավ։ Հենց այս հյուսվածքի սահմաններում էլ բանաստեղծուհին ստեղծում է մեր ազգային պատկեր-կերպարը, որպես «հավերժության ծառ»։ Իզնան մեր ազգային ոգու ինքնաճանաչման խորհրդանշանները համարում է *տառապանքը-հալածանքը-մահը-կարոտը, հուսախաբուրությունը-պատերազմը-նահատակությունը-հույսը-պայքարը*։ Մեր պատմության ընթացքի տարեգրության սահմանների մեջ բանաստեղծուհին չի շրջանցում այն ցավալի ճշմարտությունը, որ թելադրված է ասես ազգային ճակատագրով։ «Պատերազմներ, նահատակներ, մարտիրոսներ տեսանք,-գրում է նա, - ցուրտ հողը մեր տաք արցունքով թրջեցինք, արիավիրք, կեղեքում, հեծկուռ-թախծ տեսանք...», սակայն «փիւնիկ եղանք»։ Հավատարիմ հայրենասիրական իր քնարերգության ընդգրկումներին

իզման չի կորցնում պատմական հայրենիքի ազատագրման հույսը: Հայ ժողովուրդը իսկ և իսկ իր ավանդական երկրի վրա կառուցած անմահ կոթողների նման է: Վանքը հային է նման, հայը իր կերտած վանքին: Այստեղ է նրանց միասնության գաղտնիքը:

Հնամենի վանք մը եղանք
ծինին տակ կորսուեցանք
ծինահալին դարձեալ ցլացինք
անմահ երգ մը եղանք
կռունկի նման
ճախրեցինք հորիզոնէ հորիզոն...¹⁰

Բանաստեղծուհին ընդհանրացնում է, որ արմատներով մեկ, գոյատևման դժվարին ճանապարհին պարեց հայությունը, երակ-երակ ծաղկելով՝ որպես «Հավերժության ծառ»:

Պոլսահայ արդի պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից է Ջարեհ Խրախունին /1926/: Խրախունին միշտ բոլորք է պահել իր ժողովրդի ազատաբաղձ ոգու կրակը որպես բանաստեղծական խորհրդանիշ: Նրա հայերգության մեջ պարզորոշ երևում են ազգային մտածողության պատմական և գեղագիտական ակունքները: Բանաստեղծի հուզաշխարհը իսկ և իսկ հայ մարդու ապրած տառապանքի և երազի հանրագումար է: Նրա ստեղծագործության արմատները մի կողմից գնում են դեպի մեր տոհմիկ պատմության խորքերը, մյուս կողմից սնվում հայ ժողովրդի, առանձնապես սփյուռքահայության արդի տազնայներից և ակնկալություններից: Խրախունին ինչքան էլ խորհում է համամարդկային ակնկալությունների մարմնավորման մասին, միևնույն է, ձեռքը դնում է մեր ազգային ցավի վրա: Նրա էպիկական հերոսը մարդու և մարդկային հաղթանակը երազելով հանդերձ, կրծքի տակ շղոյում է մեր ազգային իդեալների ծաղկումը: Խրախունին հավատում է «թափած արյան և արցունքի» հուսաբեր արդյունքին, ուստի խորհուրդ է տալիս. ծառ տնկել և միաժամանակ խրախուսում. «ուր ալ տնկեք պիտի բռնե անպայման» /«Այս ծառը սուրբ»/: Նրա հայրենապատումը երևան է գալիս ազատերգության համաձուլվածքով: Պատճառը պարզ է: Սփյուռքը մեր ավանդական հողերի, օջախների, հեքիաթների կրոստից է ծնված, և պարզ է, որ հայրենիքի վերադարձը սփյուռքահայ /և ոչ միայն/ բանաստեղծի համար առաջին հերթին փրկության բաղձանք է, որը կոնկրետության մեջ դրսևորվում է որպես *ազատաբաղձ ոգի*: Տվյալ դեպքում Խրախունու պոեզիայում *հայրենիք-ազատություն-ոգի* հասկացությունները կերպավորվում են մեսրոպածին մեր գրերի պատկերներով: Դիմելով Ազատությանը, բանաստեղծը նշում է.

ԱՅՔ-ը արյունն է թափված
ԶԱ-ն զոհվածներն անամուն
ԱՅՔ-ը անուղ է արփավառ
ՏԻՆ-ը տենչաքնն է տանջող
Ու-ն ուրացումը ույժին
ԹՈ-ն թվականն է ահեղ
ՅՈՒ-ն յուրացումը ջախիդ
ՆՈՒ-ն նահատակը վերջին:¹¹

/«Ազատություն»/

Թեմատիկ բազմազանության մեջ Խրախունու ազատերգությունը ամենավառ երազն է, իսկ արդեն նշեցինք, որ այն ուղիղ իմաստով հայրենապատում է: Առաջին «Հաղթական» բանաստեղծությունից /1944/ մինչև «Ազատություն» 1993 զիրքը Խրախունու ստեղծագործական հուզաշխարհում հառնում է *Լեռ-ը*, շրշում *ծառ-ը*, շիկանում ԱՅԱՏՈՒԹՅԱՆ հուրը, շքերթվում ՀեղԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, դողանցում ՏՈՆԱԶԱՆԳԸ,

փողփողում ԴՌՈՇԸ, խոսում ՀԱՅԱՍՏԱՆԸ, շողում ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ խորհուրդը: Խրախունին հասել է մի բարձունքի, որտեղից ինքը հայոց համազգային ճակատագիրն է շոյում և միաժամանակ ընթերցողը իր հոգու խորքն է տեսնում: Նա տարբերվում է այն կարճամիտ մտավորականներից, ովքեր ազգի շահ-ճակատագիրը կապում են քաղաքական խաղերի, միջկուսակցական վեճերի հետ: Խրախունին ընդունում է մի ճշմարտություն՝ Վերածնված Հայաստանը Երևան ուստանով այն միակ խարխսխն է, որին հենվելով միայն աշխարհասփյուռ հայությունը կարող է հասնել իր երազած ափերին: Նման հետևության թերող լավագույն կովաններից մեկը բանաստեղծի «Նամակ եղբորս» բանաստեղծությունն է՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման առթիվ 1992 թ. գրված նրա «Արդյոք կա՞ թաքուն գաղտնիք» շարքից հետո: Բանաստեղծի և քաղաքացու հեգհամբույր և քաղաքակիրթ դիրքերից Խրախունին պատասխանել է նրանց, ովքեր քննադատել են այդ բանաստեղծության համար: Անվանի բանաստեղծը եղբոր «մեղմ սուլլը» համարում է «անողոք» արարք: Ինչպես դիպուկ նկատում է Խրախունին. «Սազ չմնաց որ չհանձնենք փչող անհաշտ անհարազատ հովերուն»: Նա հայ մարդու քաղաքացիական պարտքի զգացումով հանձն է առնում, որ «Հովը անվերջ մեր երեսը կապտակե՛ միշտ շոյելու պատրանքով...»: Մի՞թե դժվար է նկատել, որ մեր «արյունը մերս է դարձել, կը թանձրանա ամեն օր ու կը սպառնա մեզ խեղդել»: Բայց ոչ միայն այդ: Խրախունին իմաստնացած մեր կորուստներից և գտնելու նպատակով պատեպատ խփվելուց խորհրդածում է.

Եղբայր իմ
Հայրենիքը եթե միայն ծննդավայր չէ ինձի
Հայրենիքը եթե միայն սննդավայր չէ քեզի
Ես մեկ անգամ պանդուխտ եմ
Դու՛ն երկու...¹²

Խրախունին իմացական-հուզական իր պոետական ծավալումներում ծգտում է կենդանի պահել հայոց ազգային նվիրական երանգներն ու զգացումները: Նա մեր տղաների պարի մեջ տեսնում է «թևեր բացած խաչքար... Երկինք հասած կատար... մարտահրավեր» /«Պար», Հայոց Անկախության հռչակագրի տողերում շոշափում վեց դարուց ավելի խորտակված մեր պետականության վերածնունդն ու հաղթական երթը, որի առջևից ասես «Հայկ նահապետ վաղընջական իր պրկված աղեղեն կարծակե նետը լուսեղ հավերժության աստղերուն» /«Ուրեմն ըսենք պարզորեն-616»/:

Խրախունու հայրենասիրական պոեզիայում կարևոր տեղ է հատկացված պատմությանը: Նրա հիշողության սահմանները սկսվում են հայոց առաքելական շրջանից հասնում այսօրվա դրամատիկ շիկացումներին: Անցյալի և ներկայի կապը նա ներկայացնում է որպես դաս: Այդ ինչո՞ւ «Ամոցն դողենը գայլ էր, իսկ մերը գառնուկ»: Այդ չէ՞ պատճառը, որ գառները «մեծացան մաքրասպիտակ խեղճուկրակ» /«Պատմություն»/: Խրախունին անդրադառնում է ժողովրդի կորուստներին, նկարագրում դարավոր թշնամու դաժանությունները, մեր ժողովրդի ողբերգական ու ճակատագրական էջերը: Բայց պետք է ընդգծենք, որ բանաստեղծը Պոլսի պայմաններում մեր անցյալը պետք է ներկայացնի այլաբերության ընձեռած սահմաններում: Այդ է վկայում. «Ամպի պատմություն» ծավալուն բանաստեղծությունը: Ժողովրդական հեքիաթին հատուկ մուտքով բանաստեղծը նկարագրում է ամպը, որ դարերի ընթացքում «Բյուրեղափայլ փրփուր դարձած-եթերային փետրափունջի վերածված կը պսակվեր մայր արևուն ոսկեկրակ շողերով»: Սակայն ամպը «մոռացեր էր ան իր վերելքովն ինք արբշիռ ԱՆ մոռացեր էր բոլոր հովերն ու շունչն անոց չարական»: Արդյունքում.

Եվ անխնա հալածեցին ամպը հեք
Պատռեցին կտրատեցին պառակտեցին զայն ամբողջ
Պատառ-պատառ ծվեն ծվեն բզկտեցին միսն անբիծ

Փեռեկտեցին անոր մարմինն արևափայլ կաթնաթույր
Ու ցրվեցին չորս ծագերուն աշխարհի...¹³
/«Ամալի պատմություն»/

Բանաստեղծության ընթացքի մեջ խոսք է գնում գաղթաշխարհի մասին, ուր ամպը
«նստավ ցրիվ տանիքներուն և փեղկերուն և մայթերուն անտարբեր», բայց չանցան,
սպասում են պահին, որ «Վեր ամբառնան, դառնան քույա ըսպիտակ ու միանան փոքր
ամպին երկնաճեն»։ Դժվար չէ նկատել, որ բանաստեղծի երևակայության և խոհերի
շղթայում մեր ժողովրդի կորուստների և վերադարձի հույսի պատկերն է։

Հայոց մեծ եղեռնի արեւակիքի պատկերն է ներկայացվում խրախուճում
«Համակշիռ», «Ոչ այլ», «Լեռն ի վեր», «Դաշտը անտեր» և այլ ստեղծագործություններում։
Առարկայական խորհրդանշանների շրջապտույտի մեջ կարևոր տեղ է զբաղում արծիվը
որպես սավառակի հակապատկեր։ Քնարական հերոսը հանդես է բերվում արծվի
անունից։ Արծիվը սավառակը ներկայացնում է «հազար սաղրանք» խմորող չար ուժ։

Իսկ մենք արծիվ-կուրծքին կրակ սրտին արյուն
աչքին երազ ու կտուցին կոծ ու կանչ
հավերժության գազաթներին կը նայինք վար –
սավառակին
... Կը սլանանք ահագնաթափ թևածումով մանձնուրաց
չար գանգին խոտ կոխելու պես-բռնուցք կըլլանք...¹⁴
/«Սավառակ»/

Հավատարիմ հայ դասական պոեզիայի ավանդույթներին, խրախուճին
Հ.Թումանյանի, Գ.Վարուժանի, Ե. Չարենցի և մյուս մեծությունների հանգույն մեր ժողովրդի
խաղաղ ու ազատ կյանքը տեսնում է մյուս ժողովուրդների ազատ կյանքի և
համագործակցության մեջ, միաժամանակ պաշտպանելով փոքր ժողովուրդների
իրավունքները։ Թուրքիայում Հայոց Պատրիարք Արք.Գալուստյանի սուրբ հիշատակին
նվիրված «Երգ երազանքի» բանաստեղծության մեջ խրախուճին «Ազատություն,
խաղաղություն, ուրախություն» է ակնկալում աշխարհի բոլոր մարդկանց համար, իսկ
«Ղրոշ» երգում ժխտում է այն դրոշը, որի խորհրդանիշը կեռ թուրն է և մանգաղածն
մահիկը։ Նա երազում է կանաչ-սրճագույն-դեղին /ոսկեգույն/ այն դրոշը, որ.

մագերուն պես ալիք ալիք հողմածածան հերարծակ
Այն անման աղջկան
որ կուրծքը բաց
մեկ ձեռքին սուր, մյուսին հաց
Կառաջնորդե ամբոխները սրարբած։¹⁵
/«Ղրոշ»/:

Չարեհ խրախուճու հայրենապատումի մեջ Լեռը և լեռան մարդու
փոխհարաբերությունը ներկայացվում է որպես հայոց աշխարհի համայնապատկեր։
Նրանում «Մարդը լեռան կը նայի, լեռն ալ իրեն կը նայի»։ Այդ «Լեռը շենք մե...»։ Լեռան
անունը չկա, բայց պարզ է, որ լեռը երկնամերձ Արարատն է, ինչպես քնարական հերոսն է
խոստովանում.

Այն այն լեռն է
Որ ամենուր բիբին խորն է բևեռված
Որ ամենուր մորթին տակն է – միս ոսկոր
Որ ապրում է գոյություն է իրական
Ու երազ է առաջապել է անսահման։¹⁶

Սակայն Երազ-առասպել այդ լեռը վերածվում է հույսի և դեպի իրեն կանչում նրան կարոտ տիրոջը, որն էլ շշմջում է. «Այս լեռը մեծ Անմահության սանդուխտն է Ու կամաց-երկյուղած Կը բարձրանամ լեռն ի վեր»:

Ինչպես աշխարհասփյուռ, այնպես էլ պոլսահայ բանաստեղծների սրտի և հոգու ծայրը՝ ակունքված կորուսյալ հայրենիքի կարոտից, հույսի թևերով փարված Հայաստանին, տազնապած աշխարհի խաչմերուկներում ուժացման իրողությունից, երգի թևերով հանձնված է սերունդներին: Արդի սերունդը իր հայրենապատումն է արարում բանաստեղծական նոր ձևերով, որի բովանդակությունը մաքառման շոշափելի երանգներ է ձեռք բերում:

1. Սփյուռքահայ արդի գրականություն, հ.Ա, Ռոյլ օք, Միշիկոն, 1994 թ., էջ 2
2. Նույն տեղը, էջ 10:
3. Նույն տեղը, էջ 13
4. Նույն տեղը, էջ 14
5. Նույն տեղը, էջ 23
6. Նույն տեղը, էջ 49
7. Նույն տեղը, էջ 43
8. Նույն տեղը էջ 62
9. Նույն տեղը էջ 81
10. Նույն տեղը, էջ 82
11. Ջ.Խրախունի, Ազատերգություն, Երևան, 1993, էջ 23
12. Խրախունի, Ազատերգություն, Երևան, 1993, էջ 86
13. Նույն տեղը, էջ 62:
14. Նույն տեղը, էջ 75-76
15. Նույն տեղը, էջ 53
16. Սփյուռքահայ բանաստեղծություն, Երևանի պետական լսարանի հրատ. 1981, էջ 431

ХАНЯН С.А.

ТЕМА ПАТРИОТИЗМА В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ КОНСТАНТИНОПОЛЯ

Резюме

Чтобы найти ответ на вопрос, в каком процессе находится армянская поэзия в Константинополе и какое место занимает в ней тема патриотизма, достаточно обратиться к двухтомнику “Современная зарубежная армянская литература”, первый том которого состоит из 500, а второй из 800 страниц. Оба тома составила и редактировала поэтесса, литературовед и педагог Седа Цахикян-Темирчян. В первом томе охвачена армянская поэзия Константинополя, а во втором — произведения писателей армянской диаспоры.

Армянская литература Константинополя оживает в годы второй мировой войны и после нее. Это явление связано с именами Карписа Чанчикяна (1920-1946), Айказуна Галстяна (1920-1985) и Арама Шаварша (1917-1979). Их поэзию высоко оценили писатели и литературоведы Баграт Тевян, Акоп Карпенц и другие.

Знакомясь с произведениями армянских поэтов Константинополя, замечаешь, что в их мыслях и думах не забывается образ исторической родины — Западной Армении. В стихотворениях М.Теолеояна, С.С.Зангу, И.Сарыаслан и других воспеваются родные очертания.

потерянной родины, плененный Арарат, исторические памятники и т.д. В их стихах часто встречаются метафоры *история, мучение, страдание, надежда, свет*, а понятия Родина — Нация представлены как одно целое.

Крупным представителем современной армянской поэзии Константинополя является Зарех Храхуни. В его патриотических стихах национально-историческое мышление проявлено в метафорах *Родина-Свобода-Язык*. Он с большим воодушевлением воспекает независимость Армении. Образ Родины создан в стихотворении "История", "Танец", "К вершине горы", "Самолет", "Знамя" и других произведениях.

В армянской современной поэзии Константинополя новыми поэтическими формами создан образ исторической родины, освобождение которой связывается с республикой Армения.

Khanian S.A.

The theme of patriotism in modern Armenian poetry of Constantinople

Summary

To find the answer to the question in what process Armenian poetry is in Constantinople and what place the theme of patriotism takes in it, suffice to draw our attention to two-volume edition of "Modern Foreign Armenian Literature", the first volume of which includes 500 and the second — 800 pages. Both volumes were compiled and edited by a poetess, literary critic and teacher Seda Tsakhikian Temirchian. The first covers Armenian poetry in Constantinople, the second — the works of Armenian writers in Diaspora.

Armenian literature in Constantinople revived during and after the years of World War II. This phenomena is connected with the names of Karpis Chamchikian (1920-1946), Hikasune Galstian (1920-1985) and Aram Shavarsh (1917-1979). Their poetry was highly estimated by such writers and literary critics as Bagrat Tevian, Akop Karpents and others.

Getting into the works of Armenian poets Constantinople we notice that in their thoughts and ideas they don't forget the image of their historical Motherland-Western Armenia. The hearth of the lost Motherland, prisoned Ararat, historic monuments are glorified in the poems of M. Teoleolian, S. Zangu, N.Saryasian and others. In their poems we often meet metaphors, history, torture, suffering, hope, light. Such concepts as Motherland and Nation are introduced as one whole.

One of the prominent representatives of modern Armenian poetry in Constantinople is Zarekh Khrakhuni. In his poems the national-historical thinking is shown in such metaphors as Motherland-Freedom-Language. With great inspiration he glorifies the independence of Armenia. The image of Motherland is created in the poems "History", "Dance" To the Top of the Mountain", "Plane", "Banner" and other works.

In modern Armenian poetry in Constantinople by means of new poetic forms is created the image of historic Motherland, the freedom of which is connected with the Republic of Armenia.